



Գրքակց Համար  
22.02.2010  
11010095

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ի Ա Մ Ա Ն

№ 1054-Ձ

07. 12 2009

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0303 « ՈՌՈՍԱԳ ԼԵՁՎԻ ՊԱՏԱՎԱՆՂՈՄ »  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉԸ ՓԱՏՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պեկավարվելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ ԿԳ նախարարի 2009թ. մայիսի 12-ի «Նախնական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների և ուսումնամեթոդական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական եզրակացություն տալու նպատակով ստեղծվող ոլորտային հանձնաժողովների կազմը՝ ըստ մասնագիտական խմբերի հաստատելու մասին» N 445-Ա/Ք հրամանով հաստատված ոլորտային հանձնաժողովների փորձագիտական եզրակացությունը.

ԳՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0303 «Որոսաց լեզվի դասավանդում» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Նախարարության աշխատակազմի նախնական և միջին մասնագիտական կրթության վարչությանը (պետ՝ Ա. Աղբալյան) և օրենսդրության և իրավաբանական վարչությանը (պետ՝ Մ. Գրիգորյան) սահմանված կարգով հրամանը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:
3. Դրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:



Ա. ԱՆՈՏՅԱՆ

Հավելված

ՀՀ կրթության և գիտության նախարարի  
2009թ. դեկտեմբերի 7-ի N 1054-Ն հրամանի

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0303 «ՌՈՒՍԱԳ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ»  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**

**ԳԼՈՒԽ 1.**

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0303 «ՌՈՒՍԱԳ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

1. Միջին մասնագիտական կրթության «Մասնագետ» որակավորման աստիճանի 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73 -Ն որոշմամբ:
2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության համար մասնագիտացումներ սահմանված չէ:
3. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ավարտած, պետական ամփոփիչ ատեստավորումն անցած շրջանավարտին շնորհվում է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորում:
4. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝
  - 1) առկա,
  - 2) հեռակա,
  - 3) դրսեկության (էքստեռնատ),
  - 4) հեռավար (դիստանցիոն):
5. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
  - 1) կրթության առկա ձևով՝
    - ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 3 տարի
    - բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով 4 տարի
  - 2) կրթության հեռակա ձևով՝
    - ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 4 տարի
  - 3) դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի

հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստենճատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

6. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 4068 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6804 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

#### ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0303 «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

7. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները.

- 1) դասավանդողներ՝ քոլեջների, արհեստագործական դպրոցների և այլ կրթական հաստատությունների,
- 2) դասավանդողներ՝ հանրակրթական դպրոցի,
- 3) դասավանդողներ՝ հատուկ կրթության բնագավառի:

8. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

- 1) մշակել և լրամշակել ուսուցման ծրագրեր,
- 2) անցկացնել ուսուցում հանձնարարված կամ երաշխավորված ծրագրի սահմաններում,
- 3) կազմակերպել և անցկացնել ուսումնադաստիարակչական գործընթաց,
- 4) տիրապետել ուսուցման ժամանակակից մեթոդներին՝ ուսուցման գործընթացն առավել արդյունավետ իրականացնելու համար,
- 5) կազմակերպել դասարանային ուսուցում,
- 6) կազմակերպել երեխաների գիտելիքների ստուգում և ինքնաստուգում,
- 7) գնահատել սովորողներին,
- 8) կարողանալ թեստեր կազմել՝ համակարգված մոտեցումներ կիրառելով,
- 9) պլանավորել և իրականացնել սեփական մասնագիտական զարգացումը, պարբերաբար մասնակցել վերապատրաստման դասընթացների, զբաղվել ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ,
- 10) վերապատրաստման արդյունքում ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառել հետագա մասնագիտական գործունեության ընթացքում,
- 11) խրախուսել սովորողների անձնական հաջողությունները, քննարկել նրանց ձեռքբերումները ծնողների և ուսումնական մասի վարիչի հետ, ծնողներին մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական գործընթացին,
- 12) պատրաստել զեկուցումներ:

#### ԳԼՈՒԽ 3.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՁՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0303 «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

9. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,

- 2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
- 3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
- 4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,
- 5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
- 6) ինքնազարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
- 7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
- 8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
- 9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

**ԳԼՈՒԽ 4.**

**ՊԱՅԱՆՋՆԵՐ 0303 «ՌՈՒՄԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՎԱԶԱԳՈՒՅՆԻ ԵՎԱՏՄԱՄԲ**

10. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) իմանալ ՀՀ Սահմանադրության, սվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
- 2) տիրապետել հայոց լեզվին,
- 3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
- 4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- 5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
- 6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
- 7) իմանալ հոգեբանության, միջամտման միջոցառումների փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
- 8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

11. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
- 2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

13. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

#### ԳԼՈՒԽ 5.

ՊԱՅՄԱՆՁՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0303 «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՁՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ

14. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ռուսական պրակտիկական վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկական կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

15. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված

առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքերի) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

- 1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝
  - ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի,
  - բ. օտար լեզուների (ըստ լեզուների ընդգրկման),
  - գ. համակարգչային,
  - դ. լինգվաֆոնային,
  - ե. տեսակաբիւետ,
  - զ. ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների:
- 2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝
  - ա. համակարգչային,
  - բ. տեսա- և լսամոնտաժման, բազմացման, պատճենման, տեսագրման:
- 3) Մարզական համալիր՝
  - ա. մարզադահլիճ,
  - բ. մարզահրապարակ,

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնափորձական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:

3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:

4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:

5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:

6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշիչով 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում»

մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

ԳԼՈՒԽ 6.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0303 «ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԿԱՆԴՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

20. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի:

21. Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝

- 1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,
- 2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,
- 3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,
- 4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:



Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ

<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՅԴ-3-08-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Մովորողի մոտ ձևավորել աշխատանքնային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Սահմանել ուսումնառության անձնական նպատակները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները, բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք, բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ, գ. տեղեկատվության առանձնացում /խմբավորումը կատարում է նպատակային, դ. հաղորդումը իրականացնում է հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, (պարզաբանումներ ստանալու ձգտումը, զրառումներ կատարելը, ամփոփելը), բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները, գ. ցուցաբերում է համոզելու կարողություն, դ. կատարում է ճիշտ ամփոփում /եզրափակում:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները, բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները, գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել փաստաթղթավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության, բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը, գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԱԱՕ – 3-08-001

<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողի մոտ ձևավորել կազմակերպություններում աշխատանքի անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար նակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1 Կատարման չափանիշներ</b>	Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, բ. ճիշտ է ներկայացնում կազմակերպություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը, դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները, ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը, զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր նակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:
<b>Ուսումնառության արդյունք 2 Կատարման չափանիշներ</b>	Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները կազմակերպություններում ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները, բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը, գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները, դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:
<b>Ուսումնառության արդյունք 3 Կատարման չափանիշներ</b>	Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները, գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները, դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությանը ներկայացվող պահանջները և նորմերը:
<b>Ուսումնառության արդյունք 4 Կատարման չափանիշներ</b>	Ցուցաբերել առաջին օգնություն ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը, բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը, գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ, դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները, ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը, զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:
<b>ՍՈՒՊԻԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ԸԱՀ 3 -08-001

<b>Մոդուլի նպատակը</b>	Սովորողին գիտելիքեր տալ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները, բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները, գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV), դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները, բ. ճիշտ է ներկայացնում գործերընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ, գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևորումներ, դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևորումներ:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները, բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները, դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին, ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ, զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվել ղեկավարի հետ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը, բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները, գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Դրսևորել քննադատական մտածողություն
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը, բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ, գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ»

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները,  բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան),  գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները,  դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,  ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը,  զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները,  է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
Մոդուլի դասիչը	SS 3 - 08 - 001
Մոդուլի նպատակը	Տալ տարրական գիտելիքներ MICROSOFT WORD տեքստային խմբագրի մասին, ուսանողի մոտ զարգացնել տեքստային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման, տպագրման և ինտերնետ ցանցում աշխատելու տարրական հմտություններ:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար նախնական հմտություններ և կարողություններ չեն պահանջվում
Մոդուլի գնահատման կարգը	մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
Ուսումնառության արդյունք 1	WORD ծրագիր (հիմնական տեղեկություններ
Կատարման չափանիշներ	<p>ա. իմանալ Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը,  բ. բացել նոր փաստաթուղթ,  գ. ստեղծաչափի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,  դ. տեղաշարժել Տեքստային ցուցիչը տեքստի մեջ,  ե. կատարել տարրական ուղղումներ տեքստում,  զ. փակել փաստաթուղթը,  է. բացել առկա փաստաթուղթը,  ը. իմանալ Zoom գործիքի հնարավորությունները:</p>
Ուսումնառության արդյունք 2	Տեքստերի տարրական ֆորմատավորում
Կատարման չափանիշներ	<p>ա. պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,  բ. նշել բառերը և տեքստային հատվածները,  գ. կատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,  դ. կատարել տողերի հավասարեցում,  ե. փոխել միջտողային տարածությունները,  զ. փոխել տեքստի գույնը Font Color գործիքով,  է. փոխել տեքստի գունային ֆոնը Highlight գործիքով,  ը. փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,  թ. չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,  ժ. վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները,  ժա. կրկնել ֆորմատավորման վերջին գործողությունը,  ժբ. մենյուի File\Page Setup հրամանի օգնությամբ փոխել լուսանցքների խորությունները Top, Bottom, Left, Right թվային դաշտերի օգնությամբ, ընտրել էջի ուղղաձիգ (Portrait) կամ հորիզոնական (Landscape) դիրքերը, ընտրել թղթի</p>

	<p>չափերը Paper Size ցուցակի օգնությամբ,          ժգ. պատճենել տեքստը,          ժդ. տեղափոխել տեքստը,          ժե. տողադարձել տեքստը,          ժզ. համարակալել էջերը մենյուի Insert\Page Numbers... հրամանով:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Փաստաթղթի պահպանում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. իմանալ փաստաթղթերի պահպանման իմաստը,          բ. պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,          գ. պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Աղյուսակների պատրաստում և խմբագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. պատրաստել աղյուսակ,          բ. աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,          գ. կատարել ուղղումներ ու լրացումներ աղյուսակի մեջ,          դ. ավելացնել նոր տողեր և նոր սյուներ աղյուսակի մեջ,          զ. փոխել սյունակի լայնությունը Մկնիկի օգնությամբ,          է. փոխել տողի բարձրությունը Մկնիկի օգնությամբ,          ը. փոխել աղյուսակի գծերի գույնը,          թ. գունավորել աղյուսակի տողը և սյունը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Գրաֆիկական խմբագրում և նկարագրողում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. գծագրել գրաֆիկական օբյեկտներ,          բ. գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևերը,          գ. գծագրել կանոնավոր պատկերներ,          դ. ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով,          ե. խմբավորել գրաֆիկական օբյեկտները,          զ. հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,          է. գծագրել տեքստային բլոկներ,          ը. գունավորել գրաֆիկական օբյեկտները,          թ. երանգավորել գրաֆիկական օբյեկտները,          ժ. ստվերավորել գրաֆիկական օբյեկտները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Փաստաթղթի տպագրում
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. նախադիտման ռեժիմում թերթել փաստաթուղթը,          բ. իմանալ Print պատուհանի ֆունկցիաները,          գ. տպագրել փաստաթուղթը:</p>
<b>Ուսումնառության արդյունք 7</b>	Ինտերնետում աշխատելու իմացություն
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. իմանալ Ինտերնետ հասկացության նշանակությունը,          բ. ճանաչել Internet Explorer ծրագիրը, իմանալ դրա նշանակությունը,          գ. իմանալ Ինտերնետային Հասցե հասկացությունը,          դ. իմանալ History հրամանի նշանակությունը,          ե. իմանալ Favorites հրամանի նշանակությունը,          զ. իմանալ Stop հրամանի նշանակությունը,</p>

	<p>է. իմանալ Refresh հրամանի նշանակությունը,          ը. իմանալ Back և Forward կոճակների նշանակությունը,          թ. պատճենել տեքստային ինֆորմացիան ինտերնետային էջից,          ժ. պատճենել գրաֆիկական ինֆորմացիան ինտերնետային էջից,          ժա. իմանալ ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայությունները,          ժբ. ըստ չափանիշների որոնել ինֆորմացիա,          ժգ. ճիշտ օգտվել ինֆորմացիայի որոնման ինտերնետային ծառայություններից,          ժդ. իմանալ էլեկտրոնային փոստի նշանակություն,          ժե. ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:</p>
--	---

Աղյուսակ 2

Միջին մասնագիտական կրթության 0303 «Ռուսաց լեզվի դասավանդում» մասնագիտության «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՌԼԴ 4-09-001
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ հոգեկանի զարգացման ընդհանուր օրինաչափությունների, գործընթացների, որակների և վիճակների մասին, ինչպես նաև ձևավորել դպրոցական տարիքի երեխաների հոգեկան ձևավորման և զարգացման գործընթացը ճիշտ ուղղորդելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	72ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ռեսուլտատային արդյունք 1</b>	Իմանալ հոգեբանության դերն ու նշանակությունը, նրա ուսումնասիրման մեթոդները, սկզբունքները, գործառույթները և բնագավառները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում հոգեբանությունը որպես գիտություն, նրա զարգացման հիմնական փուլերը, բ. ճիշտ է բացատրում հոգեբանության ուսումնասիրության մեթոդները անձի հոգեկան կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ, գ. ճիշտ է ներկայացնում հոգեբանության սկզբունքները, գործառույթները և հոգեկանի ռեֆլեկտոր բնույթը, դ. ճիշտ է բացատրում հոգեբանության բնագավառները և միջառարկայական կապերը:
<b>Ռեսուլտատային արդյունք 2</b>	Իմանալ անձը և ճանաչել նրա գործունեության ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում անձ, անհատ, անհատականություն և մարդ հասկացությունները և ճանաչում է անձը որպես օբյեկտ և սուբյեկտ, բ. ճիշտ է ներկայացնում անձի գործունեությունը և նրա գործունեության տեսակները տարբեր տարիքային փուլերում, գ. ճիշտ է ներկայացնում տարիքին բնորոշ գործունեության առաջատար ձևը (խաղ, աշխատանք, ուսումնառություն), դ. ճիշտ է ներկայացնում անձի վարքը, նրա ինքնակառավարման հնարավորությունները:
<b>Ռեսուլտատային արդյունք 3</b>	Իմանալ անձի ճանաչողական (իմացական) գործընթացները

Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում անձի ուշադրությունը, նրա տեսակները, հիմնական որակները, դպրոցականի ուշադրությունը, որպես ճանաչողափմացական գործընթաց,</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում զգայությունը, նրա առանձնահատկությունները, տեսակները, դպրոցականի զգայությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ընկալումները, նրա տեսակները, առանձնահատկությունները և նրանց իմացական դերը,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում հիշողությունը, նրա տեսակները, հիմնական գործընթացները և դպրոցականի հիշողությունը, որպես ճանաչողափմացական գործընթաց,</p> <p>ե. իմացական գործընթացներից ճիշտ է ներկայացնում երևակայությունը, նրա տեսակները, դպրոցական տարիքի երեխաների երևակայական զարգացումը,</p> <p>զ. ճիշտ է ներկայացնում խոսքը որպես հաղորդակցման միջոց, նրա տեսակները և ճիշտ է պատկերացնում թե ինչպես է հարկավոր զարգացնել դպրոցական տարիքի երեխաների խոսքը,</p> <p>է. ճիշտ է բացատրում մտածողությունը, նրա հիմնական գործընթացները և դպրոցականի մտածողությունը:</p>
<b>ՈՒՏՈՒՄՆԱԶՈՒՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 4</b>	Իմանալ անձի գործունեության հուզականային ոլորտը
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում անձի հուզականային ոլորտը և նրա արտաքին դրսևորումները,</p> <p>բ. ճիշտ է բացատրում հույզերը և զգացմունքները, նրանց տեսակները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում կամքը, կամային ոլորտի դրսևորումները և հիմնական գործառնությունները</p> <p>ճիշտ է ներկայացնում հոգեկան վիճակներից՝ սթրեսը, ֆրուստրացիան, աֆեկտը, կիրքը և դրանց հնարավոր հոգեբանական խաթարումների նախադրյալները:</p>
<b>ՈՒՏՈՒՄՆԱԶՈՒՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 5</b>	Իմանալ անձի հոգեկան որակները կամ անհատական առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է ներկայացնում հոգեկան որակներից՝ խառնվածքը, դրա հոգեբանական բնութագիրը և նյարդային համակարգին համապատասխանող տիպերը,</p> <p>բ. ճիշտ է բացատրում բնավորությունը, դրա դրսևորումները, գծերը և դպրոցական տարիքի երեխաների բնավորությունը,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ընդունակությունները, դրանց դրսևորման պայմանները, տեսակները և դպրոցականի ընդունակությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում դիրքորոշումների կառուցվածքը, գործառնությունները և տեսակները:</p>
<b>ՈՒՏՈՒՄՆԱԶՈՒՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 6</b>	Իմանալ մանկավարժական հոգեբանության կապը տարիքային հոգեբանության հետ
Կատարման չափանիշներ	<p>ա. ճիշտ է բացատրում տարիքային և մանկավարժական հոգեբանությունը, մեթոդներն ու սկզբունքները,</p> <p>բ. ճիշտ է բացատրում տարիքային տարբեր փուլերում գտնվող երեխաների զարգացման հոգեբանական առանձնահատկությունները,</p> <p>գ. ճիշտ է ներկայացնում ուսուցչի մանկավարժական ընդունակությունները, կարողությունները և հմտությունները,</p> <p>դ. ճիշտ է ներկայացնում ուսուցչի անձի ազդեցությունը դպրոցականի անձի ձևավորման վրա:</p>
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԻՔՐԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-002
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ մանկավարժության առարկայի, խնդիրների, հիմնական գործառնությունների և հասկացությունների, ինչպես նաև մանկավարժական գիտության և պրակտիկայի փոխադարձ կապի մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>ՈՒՏՈՒՄՆԱԶՈՒՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ 1</b>	Իմանալ մանկավարժության առարկան, խնդիրները, գործառնությունները

<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում մանկավարժության առարկան, բ. ճիշտ է ներկայացնում մանկավարժության խնդիրները, գ. ճիշտ է թվարկում և մեկնաբանում մանկավարժության գործառույթները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ մանկավարժական գիտության զարգացման փուլերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում մանկավարժական մտքի զարգացման պատմական բոլոր հիմնական փուլերը, բ. ճիշտ է ներկայացնում հայ մանկավարժական մտքի պատմության բոլոր հիմնական փուլերը, գ. ճիշտ է ներկայացնում մանկավարժության որպես գիտության ձևավորման ընթացքը, դ. ճիշտ է մեկնաբանում կրթական համակարգի բարեփոխումներին միտված տեսությունները (Ջ.Դյուլի, Է.Թորնդայք, Մ.Մոնտեսորի, Ա.Բինե):
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իմանալ մանկավարժության հիմնական հասկացությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում «Կրթություն» հասկացությունը, բ. ճիշտ է ներկայացնում «Դաստիարակություն» և «Ուսուցում» հասկացությունները և դրանց փոխկապակցվածությունը, գ. ճիշտ է ներկայացնում «Զարգացում» և «Ձևավորում» հասկացությունները, դ. ճիշտ է ներկայացնում տարիքային պարբերությունների իմացության անհրաժեշտությունը ուսուցչի համար:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Իմանալ մանկավարժական գիտությունների համակարգի զարգացման արդի ուղղությունները և դրանց դերը ուսումնադաստիարակչական գործընթացում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում մանկավարժական գիտության և պրակտիկայի փոխադարձ կապը, բ. ճիշտ է ներկայացնում ավանդական մանկավարժության ուղղությունը, գ. ճիշտ է ներկայացնում մանկավարժության հումանիստական ուղղությունը:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-003
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ դաստիարակության գործընթացի էության ու կառուցվածքի, մարդու կյանքում դաստիարակության դերի, դաստիարակության՝ որպես անձի սոցիալականացման գործոնի, դաստիարակության հիմնական հասկացությունների, հումանիստական դաստիարակության էության, դաստիարակության կադապարների և ոճերի, ինչպես նաև անձի դաստիարակության և զարգացման նպատակի, առանձնահատկությունների, խնդիրների ու գործառույթների մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001 «Հոգեբանություն» մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ դաստիարակության նպատակը, էությունը, օրինաչափությունները և հիմնական հասկացությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է նկարագրում դաստիարակության զարգացումը հասարակության զարգացման գործընթացում և դաստիարակության նպատակի ձևավորումը, բ. ճիշտ է ներկայացնում դաստիարակության օրինաչափությունները և դրանց իմացության անհրաժեշտությունը, գ. ճիշտ է ձևակերպում և մեկնաբանում դաստիարակության հիմնական հասկացությունները, ե. ճիշտ է ներկայացնում ինքնադաստիարակության դերն անձի ձևավորման գործընթացում:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ դաստիարակության սկզբունքները և դրանց դերը ամբողջական մանկավարժական գործընթացում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է թվարկում դաստիարակության սկզբունքները,



	բ. Ճիշտ է ներկայացնում դաստիարակության սկզբունքների ձևավորման սոցիալական հիմքերը, գ. Ճիշտ է ներկայացնում դաստիարակության սկզբունքների կիրառման հնարավորությունները ամբողջական մանկավարժական գործընթացում:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իմանալ դաստիարակության մեթոդները, դրանց դասակարգումն ու կիրառման հնարավորությունները ամբողջական մանկավարժական գործընթացում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. Ճիշտ է ներկայացնում դաստիարակության հիմնական հասկացությունները՝ մեթոդ, հնար, միջոց, բ. Ճիշտ է ներկայացնում դաստիարակության մեթոդների դասակարգումը, գ. Ճիշտ է ներկայացնում մեթոդական խմբերի մեթոդների կիրառումը դասի ընթացքում և դասից դուրս, դ. Ճիշտ է ներկայացնում խմբային աշխատանքի, միմյանց կարծիքը լսելու և հանդուրժողականության արմատավորման դերը անձի դաստիարակության գործընթացում:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Իմանալ դաստիարակության կադապարները և կողմերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. Ճիշտ է ներկայացնում հումանիստական դաստիարակության նպատակն ու խնդիրները, բ. Ճիշտ է ներկայացնում պատմամշակութային դաստիարակության նպատակն ու խնդիրները, գ. Ճիշտ է ներկայացնում դաստիարակության բոլոր սահմանված կողմերը:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈւԴ 4-09-004
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ զարգացման տարբեր շեղումներ ունեցող աշակերտների առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորվել նրանց ուսուցման, դաստիարակության և սոցիալականացման համար մեթոդների ու միջոցների կիրառման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլին ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈւԴ 4-09-001 «Հոգեբանություն» մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ հատուկ մանկավարժության ուսումնասիրության առարկան, խնդիրները, ճյուղերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. Ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության ուսումնասիրման առարկան և խնդիրները, բ. Ճիշտ է բնութագրում հատուկ մանկավարժության բնագավառները, գ. Ճիշտ է ներկայացնում հատուկ մանկավարժության տեղն ու դերը մանկավարժական գիտության մեջ:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ «նորմա» և «շեղումներ նորմայից» հասկացությունների էությունը, շեղումների տեսությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. Ճիշտ է ներկայացնում «նորմա» և «շեղումներ նորմայից» հասկացությունների էությունը, բ. Ճիշտ է ներկայացնում անոմալ աշակերտների հիմնական խմբերը, գ. Ճիշտ է ներկայացնում սահմանափակ հնարավորություններով աշակերտների արատների ու շեղումների ծագման պատճառները և դրանց դեմ պայքարելու ուղիները, դ. Ճիշտ է ներկայացնում զարգացման շեղումների կենսաբանական, սոցիալական և հոգեբանական տեսությունները, ե. Ճիշտ է տարբերակում առաջնային և երկրորդային խանգարումները և ճիշտ է ներկայացնում երկրորդային խանգարումների հաղթահարման ուղիները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իմանալ աշակերտի ֆիզիկական զարգացման խանգարումները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. Ճիշտ է ներկայացնում տեսողության խանգարումներ ունեցող աշակերտների զարգացման առանձնահատկությունները, ուսուցման և դաստիարակության մեթոդները, բ. Ճիշտ է բնութագրում լսողության խանգարումներ ունեցող աշակերտների զարգացման առանձնահատկությունները,

	ուսուցման և դաստիարակության մեթոդները, գ. ճիշտ է բնութագրում շարժողական օրգանների արատներ ունեցող աշակերտների զարգացման առանձնահատկությունները, դ. ճիշտ է բացատրում աշակերտի առողջական վիճակի ազդեցությունը նրա զարգացման վրա:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Իմանալ աշակերտի հոգեկան զարգացման խանգարումները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բնութագրում հոգեկան զարգացման հապաղումով տառապող աշակերտներին, բ. ճիշտ է ներկայացնում օլիգոֆրեն աշակերտների զարգացման առանձնահատկությունները և դաստիարակության խնդիրները գ. նկարի վրա ճիշտ է ցուցադրում խոսքային կառույցի մասերը և նշում հնարավոր թերությունները, դ. ճիշտ է բնութագրում խոսքի խանգարումները և դրանց շտկման մեթոդները, ե. ճիշտ է բնութագրում հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող աշակերտներին, զ. ճիշտ է նկարագրում օժտված աշակերտներին է. ճիշտ է բացատրում հոգեկան և (կամ) ֆիզիկական շեղումների դերը աշակերտի սոցիալականացման գործում:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Իմանալ աշակերտի սոցիալական զարգացման խանգարումները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում վարքի սոցիալական նորմերը և դրանց առանձնահատկությունները տարբեր տարիքում, բ. ճիշտ է բնութագրում «դժվար» աշակերտներին և ներկայացնում նրանց հետ տարվող աշխատանքի սկզբունքներն ու բովանդակությունը, գ. ճիշտ է նկարագրում սահմանային գոտում գտնվող աշակերտներին և նշում շեղումների կանխարգելման ուղիները, դ. ճիշտ է ներկայացնում զարգացման շեղումներով աշակերտների ընտանեկան դաստիարակության առանձնահատկությունները, ե. ճիշտ է ցուցադրում զարգացման շեղումներով աշակերտների ծնողներին խորհրդատվական օգնություն տրամադրելու օրինակներ:
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Իմանալ ներառական կրթության նպատակը և նշանակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում ներառական կրթության կազմակերպման ձևերը, բ. ճիշտ է բացատրում ներառական կրթության դերը հատուկ կարիքներով աշակերտների սոցիալականացման գործում, գ. ճիշտ է հիմնավորում ներառական կրթության դերը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների նկատմամբ հասարակական վերաբերմունքի բարելավման գործում:
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-005
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ կրթության բովանդակության, կրթակարգի, միջնակարգ դպրոցի պետական չափորոշիչի վերաբերյալ
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001 «Յոգեբանություն» մոդուլը
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ կրթության բովանդակության բաղադրիչները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում գիտելիք, կարողություն, հմտություն հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում դասագրքերին և ուսումնական ձեռնարկներին ներկայացվող պահանջները, գ. ճիշտ է ներկայացնում հիմնական և ավագ դպրոցների ուսումնական պլանի բաղադրիչները,

	դ. ճիշտ է ներկայացնում ինտեգրված առարկաների զուգակցումը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b> <b>Կատարման չափանիշներ</b>	Իմանալ ՅՅ կրթակարգի հիմնադրույթները և դրանց կիրառման հնարավորությունները ուսումնական գործընթացում ա. ճիշտ է ներկայացնում ՅՅ կրթակարգի հիմնական դրույթները, բ. ճիշտ է ներկայացնում ուսումնական գործընթացում ՅՅ կրթակարգի կիրառման հնարավորությունները, գ. ճիշտ է ներկայացնում հանրակրթության կազմակերպման սկզբունքները և բարեփոխման ռազմավարությունը:
<b>Ուսումնառության արդյունք 3</b> <b>Կատարման չափանիշներ</b>	Իմանալ միջնակարգ կրթության պետական չափորոշիչ կառուցվածքը և գործառույթները ա. ճիշտ է ներկայացնում միջնակարգ կրթության պետական չափորոշիչ կառուցվածքը և գործառույթները, բ. ճիշտ է ներկայացնում սովորողների յուրացման համար նախատեսված գիտելիքների մակարդակները՝ ելնելով ուսուցման տարբեր աստիճանների նպատակներից, գ. ճիշտ է ներկայացնում կարողությունների և հմտությունների ամբողջությունը (ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ինքնուրույն գործունեության և ստեղծագործական):
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈւԼԴ 4-09-006
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ դիդակտիկայի առարկայի, հիմնական հասկացությունների, խնդիրների ու գործառույթների, ուսուցման գործընթացի էության, նպատակների ու խնդիրների, ուսուցման մեթոդների դասակարգման և ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլին ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈւԼԴ 4-09-001 «Յոգեբանություն» և ՈւԼԴ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b> <b>Կատարման չափանիշներ</b>	Իմանալ դիդակտիկա առարկան, դրա հիմնական հասկացությունները, խնդիրները ա. ճիշտ է ներկայացնում դիդակտիկայի զարգացումը և հատուկ հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում դիդակտիկան՝ որպես ուսուցման տեսություն, գ. ճիշտ է ներկայացնում դիդակտիկայի կապը մասնավոր դիդակտիկաների հետ, դ. ճիշտ է ներկայացնում արդի դիդակտիկայի հիմնախնդիրները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b> <b>Կատարման չափանիշներ</b>	Իմանալ ուսուցման գործընթացի էությունը, նպատակներն ու խնդիրները ա. ճիշտ է ներկայացնում ուսուցման գործընթացի կառուցվածքը և գործառույթները, բ. ճիշտ է ներկայացնում ուսուցման գործընթացի կրթական, դաստիարակչական և զարգացնող գործառույթների միասնությունը, գ. ճիշտ է ներկայացնում ուսուցում և ուսումնառություն հասկացությունները, դ. ճիշտ է ներկայացնում ուսումնառության տեսակները, ե. ճիշտ է ներկայացնում ուսումնառության վրա ազդող գործոնները, զ. ճիշտ է ներկայացնում մանկավարժահոգեբանական ուսումնական տեսությունները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b> <b>Կատարման չափանիշներ</b>	Իմանալ ուսուցման սկզբունքները ա. ճիշտ է թվարկում ուսուցման հիմնական սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում ուսուցման ավանդական և արդի սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում ուսուցման սկզբունքների փոխկապակցվածությունը, դ. ճիշտ է ներկայացնում ուսուցման և դաստիարակության սկզբունքների ընդհանրությունները

<b>Ուսումնառության արդյունք 4</b> <b>Կատարման չափանիշներ</b>	Իմանալ ուսուցման մեթոդների դասակարգումը և ուսուցման արդի տեխնոլոգիաները ա. ճիշտ է ներկայացնում ուսուցման մեթոդների պատմական զարգացումը, բ. ճիշտ է ներկայացնում ուսուցման մեթոդներ, միջոցներ, հնարքներ, կանոններ հասկացությունները, գ. ճիշտ է ներկայացնում ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդները, դ. ճիշտ է թվարկում ուսուցման մեթոդների դասակարգման սկզբունքները, ե. ճիշտ է տարրորշում ուսուցման մեթոդների ընտրության օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները, զ. ճիշտ է ընտրում ուսուցման մեթոդը՝ ելնելով առաջադրված դասանպատակից. է. ճիշտ է ներկայացնում ուսուցման ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները. ը. ճիշտ է ներկայացնում ուսուցման ժամանակ դրդապատճառային տեխնիկաների կիրառումը:
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴՐԴԱՊԱՏՏԱՆՈՒՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈւՂ 4-09-007
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ուսումնական մասնագիտական գործունեության մեջ դրդապատճառների դերի, ուսումնառության վրա դրդապատճառների դրական և բացասական ազդեցության ուժեղացման վերաբերյալ, ձևավորել գործնականում օժանդակություն ցուցաբերելու և դրդապատճառային տեխնիկա կիրառելու, տարբեր ուսումնական իրավիճակներում:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ ուսումնառության և դրդապատճառների կապը և տարբերել դրդապատճառների դրական և բացասական ազդեցությունների ուժեղացման հնարավորությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում դրդապատճառի դերն ուսումնառություն գործընթացում, բ. ճիշտ է ներկայացնում դրդապատճառների դրական և բացասական ազդեցությունը, գ. ճիշտ է ներկայացնում դրդապատճառի կախվածությունը անձի պահանջումների տեսակից և անձի առանձնահատկություններից
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Խթանել տարբեր ուսումնական իրավիճակներում դրական դրդապատճառների ձևավորումը և մշակել դրանց օժանդակման հնարավորությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ պայմաններ է ստեղծում դրական դրդապատճառի ձևավորման համար, բ. ճիշտ է ելնում արդեն առկա դրդապատճառներից, գ. ճիշտ և հետաքրքիր է ներկայացնում ուսումնառության առարկան, դ. վերացնում է կաշկանդվածությունը և աշակերտներին ներշնչում է որոշումներ կայացնելու վստահություն., ե. դյուրին է դարձնում է ուսումնառության նյութի մտովի ընկալումը՝ թույլատրելով լուծման փորձարկումը, զ. առաջադրված իրավիճակում ճիշտ է մշում դրդապատճառների դրական և բացասական ազդեցության ուժեղացումը:
<b>ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԴԱՍԱՎԱՆԴԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄԱՌՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈւՂ 4-09-008
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Սովորողները կբացատրեն, կնկարագրեն և կցուցադրեն դասավանդմանն ու ուսումնառությանն աջակցելու նպատակով տեսողական և այլ օժանդակ միջոցների գործնական կիրառությունը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ

<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՌԼԴ 4-09-001 «Հոգեբանություն» և ՌԼԴ4-09-003 «Դաստիարակության գործընթաց» մոդուլները
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1 Կատարման չափանիշներ</b>	Իմանալ ուսումնառության ժամանակ օգտագործվող օժանդակ միջոցներ ա. ճիշտ է մեկնաբանում օժանդակ միջոցները և դրանց տեսողականացման նշանակությունը, բ. ճիշտ է բացատրում օժանդակ միջոցների կիրառման անհրաժեշտությունը ուսուցման և ուսումնառության գործընթացում
<b>Ուսումնառության արդյունք 2 Կատարման չափանիշներ</b>	Իմանալ օժանդակ միջոցների կիրառման նշանակությունն ուսանողների ուսումնառությանն աջակցելու հարցում ա. ճիշտ է թվարկում տեսողականացման միջոցները և բացատրում դրանց ազդեցությունը ուսումնառության վրա, բ. ճիշտ է ներկայացնում տվյալների տեսողականացման ընդհանուր սկզբունքները:
<b>Ուսումնառության արդյունք 3 Կատարման չափանիշներ</b>	Ընտրել մատչելի, նպատակահարմար օժանդակ միջոցներ և օգտագործել դրանք կոնկրետ ուսումնառության գործունեության համար ա. ճիշտ է ընտրում և կիրառում մատչելի, նպատակահարմար օժանդակ միջոցներն առաջադրված ուսումնական գործունեության համար, բ. ճիշտ է ցուցադրում առաջարկված օժանդակ պարագաներից 2-ի կիրառումը:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՌԻՍԻՆԱՌՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՌԼԴ 4-09-009
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է ներկայացնել համագործակցային ուսումնառության դերը անհատի անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման գործում և դրա կիրառման մի քանի մոդելներ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՌԼԴ 4-09-001 «Հոգեբանություն», ՌԼԴ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>Ուսումնառության արդյունք 1 Կատարման չափանիշներ</b>	Իմանալ համագործակցային ուսումնառության տարրերը ա. ճիշտ է ներկայացնում դրական փոխկապակցվածությունը, բ. գիտի դեմ առ դեմ խթանող փոխազդեցությունը, բ. ճիշտ է ներկայացնում համագործակցային խմբերի տեսակները:
<b>Ուսումնառության արդյունք 2 Կատարման չափանիշներ</b>	Կազմակերպել համագործակցային ուսումնառություն ա. ճիշտ է ներկայացնում ուսուցչի դերը համագործակցային ուսումնառության կազմակերպման գործում, բ. ճիշտ է ներկայացնում խմբեր կազմելու եղանակը, դ. ճիշտ է պլանավորում համագործակցային դասը:
<b>Ուսումնառության արդյունք 3 Կատարման չափանիշներ</b>	Կիրառել համագործակցային ուսումնառության մեթոդները ա. լսարանային աշխատանքի ժամանակ ճիշտ է կիրառում «Խճանկար» մեթոդը, բ. լսարանային աշխատանքի ժամանակ ճիշտ է կիրառում «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդը, գ. լսարանային աշխատանքի ժամանակ ճիշտ է կիրառում «Խմբային հետազոտության» մեթոդը:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՌԻՍԻՑԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՌԼԴ 4-09-010

<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է ռուսաց լեզվի ուսուցիչ որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակության, գնահատման հիմնական նպատակների, խնդիրների և գործառույթների, սովորողների ուսումնական գործունեության ընթացիկ գնահատումը կարգավորող սկզբունքների, մոտեցումների, հնարների, գնահատման ձևերի ու ստուգման տեսակների, կիսամյակային ամփոփիչ և տարեկան վերջնական ամփոփիչ գնահատականների ձևավորման, ուսումնառության արդյունքների սանդղակավորման, ինչպես նաև ձևավորել ընթացիկ՝ ուսուցանող, պարտադիր գրանցման միավորային, ամփոփիչ գնահատման և կիսամյակային ու տարեկան գնահատականներ ձևավորելու կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՌԼԴ 4-09-001 «Հոգեբանություն», ՌԼԴ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՌԼԴ 4-09-006 «Ուսուցման գործընթաց» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ ուսումնական աշխատանքի հաշվառման բովանդակությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում վերահսկողության տեսակները, բովանդակությունը, մեթոդները և մանկավարժական պահանջները, բ. ճիշտ է ձևակերպում չափում, գնահատում և արժևորում հասկացությունները, գ. ճիշտ է ներկայացնում լեզվի գնահատման առանձնահատկությունները՝ ըստ խոսքային գործունեության տեսակների:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ գնահատման սկզբունքները, տեսակները, գործառույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում գնահատման բոլոր սկզբունքները, բ. ճիշտ է բացատրում հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ գնահատում տեսակները, գ. ճիշտ է բացատրում գնահատման գործառույթները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել ընթացիկ, ամփոփիչ գնահատում, ձևավորել կիսամյակային ու տարեկան գնահատականներ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է գնահատում աշակերտներին բալային համակարգով, բ. ճիշտ է հասկանում գնահատման սկզբունքները և առանձնահատկությունները ըստ առաջադրանքների բարդության աստիճանների, գ. նպատակային և ճիշտ է կատարում ընթացիկ գնահատումը, դ. նպատակային և ճիշտ է կատարում ամփոփիչ գնահատումը, ե. ճիշտ է որոշում կիսամյակային ու տարեկան գնահատականները:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Կիրառել գնահատման մեթոդաբանությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է բացատրում ուսումնառության արդյունքների ստուգման միավորային սանդղակով գնահատման համակարգը, բ. ճիշտ է կիրառում առարկայական չափորոշիչները ուսումնառության արդյունքների ստուգման համար, գ. ճիշտ է կիրառում առարկայական ծրագրում ներկայացված գնահատման ժամանակակից ձևերը:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կիրառել գնահատման արդյունքների սանդղակավորում
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում կիսամյակային և տարեկան վերջնական ամփոփիչ գնահատականների ձևավորումը բ. ճիշտ է ներկայացնում գնահատման արդյունքների սանդղակավորումը և առաջադիմության վիճակագրության պատկերագրումը, գ. ճիշտ է կատարում գնահատումների և գնահատականների գրանցումը և հաշվառումը, դ. ճիշտ է կիրառում գնահատման նոր մոտեցումները. գնահատման սանդղակը (ռուբրիկ), ուսումնական թղթապանակը, ե. ճիշտ է ներկայացնում եվրոպական լեզվական թղթապանակի (ԵԼԹ) բովանդակությունը և կառուցվածքը,

	գ. Ճիշտ է կիրառում եԼԹ-ն եվրախորհրդի լեզվաքաղաքականության և լեզվակրթության համատեքստում:
<b>ՍՈՂՈՒԼԻ ՆԱՎԱՆՈՒՄԸ «ԴԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ»</b>	
<b>Սողուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-011
<b>Սողուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» և որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Սողուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիք դասին նախապատրաստվելու սկզբունքների, եղանակների և առանձնահատկությունների մասին, ինչպես նաև ձևավորել գրավոր և բանավոր առաջադրանքներ և թեստային աշխատանքներ կազմելու կարողություններ:
<b>Սողուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001«Հոգեբանություն», ՈԼԴ 4-09-002 «Մանկավարժությունն իբրև գիտություն և նրա հիմնական հասկացությունները», ՈԼԴ 4-09-006 «Ուսուցման գործընթաց», ՈԼԴ 4-09-007 «Դրդապատճառային տեխնիկայի կիրառում», ՈԼԴ 4-09-008 «Դասավանդման և ուսումնառության օժանդակ միջոցների կիրառում», ՈԼԴ 4-09-009 «Համագործակցային ուսումնառություն» մոդուլները:
<b>Սողուլի գնահատման կարգը</b>	Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ ուսուցման կազմակերպման ձևերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում մանկավարժական համակարգերի կազմակերպման ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում դաս-դասարանային համակարգի ընդհանուր բնութագիրը, գ. ճիշտ է ներկայացնում ուսումնական գործընթացի կազմակերպման լրացուցիչ ձևերը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ դասի տիպերը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում դասի ավանդական և ժամանակակից տիպերը, բ. ճիշտ է ներկայացնում դասն իբրև ամբողջական համակարգ, գ. ճիշտ է ներկայացնում ԽԻԿ (Խթանում, Իմաստի ընկալում, Կշռադատում) համակարգի դասը, դ. ճիշտ է ներկայացնում դասի կազմակերպման լրացուցիչ ձևերը:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կազմել թեմատիկ պլան
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում առարկայի ծրագրի պահանջները և ժամաքանակը, բ. ճիշտ է ներկայացնում թեմատիկ պլանի կառուցվածքը, գ. ճիշտ է կազմում թեմատիկ պլանը՝ կիրառելով առարկայական ծրագրում զետեղված բովանդակային միջուկը:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Սահմանել դասի նպատակը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում «ուսումնական նպատակներ» և «ուսումնառության արդյունք» հասկացությունները, բ. ճիշտ է ներկայացնում ուսումնական նպատակների սահմանման անհրաժեշտությունը, գ. ճիշտ է ներկայացնում ուսումնական նպատակների աստիճանակարգը (տաքսոնոմիաները) և դրանց նշանակությունը, դ. ճիշտ է ձևակերպում դասի նպատակը, ե. ճիշտ է բխեցնում ուսումնական բովանդակությունը ուսումնական նպատակների հիման վրա:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կազմել դասի պլան՝ վերլուծելով անհրաժեշտ պահանջները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում դասի պլանավորման համար նախնական պայմանների ուսումնասիրության անհրաժեշտությունը, բ. ճիշտ է վերլուծում և աշակերտների և դասարանի մակարդակը, գ. ճիշտ է սահմանում դասի խնդիրները, դ. ճիշտ է իրականացնում դասավանդման և ուսումնառության ռազմավարությունների ընտրությունը, ե. ճիշտ է ընտրում մեթոդները՝ դասի խնդիրներն իրականացնելու համար .

	գ. ճիշտ է կազմում դասի պլանն՝ ըստ թեմատիկ պլանի:
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Կազմել գրավոր ու բանավոր առաջադրանքներ և թեստային աշխատանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է կազմում գրավոր առաջադրանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների, բ. ճիշտ է կազմում բանավոր առաջադրանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների, գ. ճիշտ է կազմում թեստային առաջադրանքներ՝ ըստ գնահատման մեթոդաբանության պահանջների, դ. ճիշտ է թվարկում դասավանդման և ուսումնառության նյութերի մշակման և պատրաստման ընթացակարգերը և պահանջները, ե. ճիշտ է օգտագործում պատրաստված նյութերը աշխատանքի ընտրված բաժնում:
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵՋՈՒՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՌԼԴ 4-09-012
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ լեզվի, դրա հատկանիշների և գործառնությունների, ինչպես նաև լեզվի բնույթի, ծագման, զարգացման, ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումների վերաբերյալ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՌԼԴ 4-09-001 «Հոգեբանություն» մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ լեզվի հիմնական հատկանիշները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է որոշում տվյալ լեզվի բնույթը, բ. ճիշտ է ներկայացնում լեզվի երկկողմանի միավորներն իբրև արտահայտության և բովանդակության տարբեր բարդություն ունեցող միասնություններ, գ. ճիշտ է ներկայացնում հաղորդակցման ակտի թեմա-ռեմատիկ հորինվածքը, դ. ճիշտ է ներկայացնում լեզվի դերը հասարակության կյանքում:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ լեզվի ծագումը և զարգացումը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում լեզուների ծագման հիմնական տեսությունները, լուսաբանում է լեզվի ծագման խնդիրը լեզվաբանական գիտության վերջին նվաճումների լույսի տակ, ճիշտ է խմբավորում դրանք բնական և հասարակական կոչված խմբերում, բ. ճիշտ է ներկայացնում լեզվի զարգացման պարզագույն ընթացումներն ու դրանց ժամանակակից մեկնաբանությունները, շարժման և դադարի, էներգիայի և էրգոնի, սինխրոնիայի և դիսխրոնիայի հետ եղած կապը, գ. ճիշտ է տարբերակում լեզվի զարգացման մեթոդները և արտաքին դրոշմները, դ. ճիշտ է ներկայացնում հին հույների ֆյուսեյ և թեսեյ տեսություններն իրի և անվան կապի մասին:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իմանալ լեզուների ծագումնաբանական և տիպաբանական դասակարգումները, դրանց ընդհանրությունները և տարբերությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում լեզվաընտանիք, լեզվաճյուղ, հեռու և մոտիկ ցեղակցության լեզուներ, նախալեզու, քույր և եղբայր լեզուներ հասկացությունները հնդեվրոպական լեզվաընտանիքի նյութի հիման վրա, բ. ճիշտ է ներկայացնում լեզուների ձևաբանական դասակարգումը, տիպերը, ընդհանրություններն ու տարբերությունները, գ. ճիշտ է ներկայացնում լեզուների տիպաբանական դասակարգումը նախնական պարզագույն վիճակից մինչև ժամանակակից տիպաբանական համակարգը, դ. ճիշտ է տարբերակում լեզվաընտանիքի և լեզվամիության (Shprachbund) առանձնահատկությունները:



<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Իմանալ լեզու, բարբառ և ժարգոն հասկացությունները, դրանց ընդհանրություններն ու տարբերությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում աշխարհի լեզվական քարտեզը, բ. ճիշտ է ներկայացնում լեզվի հատկանիշներն ու սահմանումները, գ. ճիշտ է ներկայացնում լեզու – լեզու, լեզու - բարբառ, բարբառ - բարբառ զուգահեռները, դ. ճիշտ է ներկայացնում մասնագիտական լեզու – համաժողովրդական լեզու ոլորտների ընդհանրություններն ու տարբերությունները, ե. ճիշտ է ներկայացնում բառապաշար, եզրուբապաշար, անվանակարգ ոլորտների ընդհանրություններն ու տարբերությունները:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒՆԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-013
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ լեզվաբանություն մակրոգիտության, դրա տեղի և դերի մասին՝ բոլոր, հատկապես հասարակական գիտությունների շարքում:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ պատմահամեմատական լեզվաբանությունը որպես գիտական լեզվաբանության առաջին ճյուղ և պատմահամեմատական մեթոդի տեսական և գործնական սկզբունքները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական լեզվաբանության ստեղծման նախադրյալները, բ. ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական լեզվաբանության հիմնադիրներին և առաջին գիտական լեզվաբանության ձևավորման ընթացքը, գ. ճիշտ է ներկայացնում լեզուների ցեղակցության գաղափարը գիտականորեն հիմնավորող առաջին ներկայացուցիչների գործունեությունը հնդեվրոպական լեզուների ոլորտում, դ. ճիշտ է ներկայացնում պատմահամեմատական մեթոդի տեսական և գործնական սկզբունքները, ե. ճիշտ է ներկայացնում լեզուների ծագումնաբանական դասակարգման էությունն ու ընթացակարգը:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ «ընդհանուր լեզվաբանություն» գիտաճյուղը, «ընդհանուր համեմատությունների մեթոդը» և առնչությունը «մասնավոր լեզվաբանություն» գիտաճյուղին ու նրա ուսումնասիրության մեթոդներին
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում ընդհանուր լեզվաբանության հիմնական հասկացությունները, բ. ճիշտ է տարբերակում անհատի լեզու, ազգային լեզու և համամարդկային լեզու հասկացությունները և ներկայացնում դրանց ընդհանուր կապերը, գ. ճիշտ է ներկայացնում ընդհանուր համեմատությունների մեթոդի սկզբունքները, դ. լեզվից վերցված պարզագույն օրինակների վրա ճիշտ է ցուցադրում ազգային լեզվի (քերականության) և մտածողության փոխազդեցությունն ու պատմական փոխայայնմանավորվածությունը, ե. ճիշտ է ներկայացնում մասնավոր լեզվաբանության նպատակը, խնդիրները և հիմնական հասկացությունները, զ. ճիշտ է տարբերակում մասնավոր լեզվաբանության գիտական և նորմատիվ քերականությունների խնդիրներն ու նպատակները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իմանալ «ընդհանուր լեզվաբանություն» գիտաճյուղը, «ընդհանուր համեմատությունների մեթոդը» և առնչությունը «մասնավոր լեզվաբանություն» գիտաճյուղին ու նրա ուսումնասիրության մեթոդներին
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում ընդհանուր լեզվաբանության հիմնական հասկացությունները,

	բ. ճիշտ է տարբերակում անհատի լեզու, ազգային լեզու և համամարդկային լեզու հասկացությունները և ներկայացնում դրանց ընդհանուր կապերը, գ. ճիշտ է ներկայացնում ընդհանուր համեմատությունների մեթոդի սկզբունքները, դ. ռիսազդեցությունն ու պատմական փոխալսմանն ավարտությունը, ե. ճիշտ է ներկայացնում մասնավոր լեզվաբանության նպատակը, խնդիրները և հիմնական հասկացությունները, զ. ճիշտ է տարբերակում մասնավոր լեզվաբանության գիտական և նորմատիվ քերականությունների խնդիրներն ու նպատակները:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Իմանալ «սոցիոլոգիզմ» ուղղությունը, դրա ժնկի և Փարիզի դպրոցները, Ֆ.դը Սոսյուրի երկատումները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիզմի առաջացման պատմական նախադրյալները, բ. ճիշտ է ներկայացնում Ֆ. դը Սոսյուրի ծառայությունները պատմահամեմատական լեզվաբանության ոլորտում և նոր լեզվաբանության հիմնադրման գործում, գ. ճիշտ է ներկայացնում Սոսյուրի լեզվաբանական տեսության կառույցը որպես երկատումների համակարգ, դ. ճիշտ է ներկայացնում Սոսյուրի տեսության զարգացումը ժնկի և Փարիզի դպրոցների նրա աշակերտների և համախոհների կողմից, ե. ճիշտ է ներկայացնում սոցիոլոգիզմի ազդեցությունը նկարագրական կառուցվածքային լեզվաբանության ձևավորման, զարգացման և տարածման գործում:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Իմանալ «կառուցվածքային լեզվաբանություն» ուղղությունը և դրա չեխական, դանիական, ամերիկյան, լոնդոնյան և խորհրդային դպրոցները, դրանց բերած մեթոդական նորությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում չեխական ֆունկցիոնալ կառուցվածքային լեզվաբանական դպրոցը և նրա բերած գիտական-մեթոդական նորությունները, բ. ճիշտ է ներկայացնում Կոպենհագենի համալսարանի կառուցվածքային լեզվաբանական գլոսսեմատիկա դպրոցը իբրև ունիվերսալ քերականություն, գ. ճիշտ է ներկայացնում ամերիկյան Յել և Մասաչուսեթս նահանգներում ձևավորված կառուցվածքային լեզվաբանական դպրոցներն ու նրանց բերած գիտական-մեթոդական նորությունները, դ. ճիշտ է ներկայացնում խորհրդային և հայկական կառուցվածքաբանական դպրոցները և նրանց դեմ մղվող պայքարը, ե. ճիշտ է ներկայացնում կառուցվածքային լեզվաբանության մեթոդների ընդհանուր բնութագիրը:
<b>ՍՈՊՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԼԵԶՎԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	<b>ՈւՂ 4-09-014</b>
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիք լեզվի երկու գոյածների՝ իբրև համակարգ և կառուցվածք, նրանց փոխակերպումների, միավորների և նրանց միջև գործող հարաբերությունների մասին, որոնց գործարկումով հնարավոր է դառնում իրագործել հասարակության համար լեզվի կարևորագույն՝ հաղորդակցական դերը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈւՂ 4-09-001 «Հոգեբանություն», ՈւՂ 4-09-009 «Համագործակցային ուսումնառություն», ՈւՂ 4-09-011 «Դասի նախապատրաստում» մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Տարբերել «լեզվի համակարգ» և «լեզվի կառուցվածք» հասկացությունները, իմանալ «լեզու» և «լեզվաբանություն» հասկացությունների բաղադրիչների հարաբերությունները՝ որպես լեզվի կառուցվածքային մակարդակներ և լեզվաբանության բաժիններ

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում «լեզվի մակրոհամակարգ» հասկացությունը՝ որպես միկրոհամակարգերի համակարգ,  բ. ճիշտ է ներկայացնում «լեզվի կառուցվածք» հասկացությունը՝ որպես լեզվական մակարդակների ենթադասություն,  գ. ճիշտ է ներկայացնում «լեզվի մակարդակ» և «լեզվաբանության բաժիններ» հարաբերակցությունը,  դ. ճիշտ է ներկայացնում լեզվի մակարդակները դրանց միավորներն ու նրանց միջև գործող հարաբերությունները սահմանելու ընթացակարգը,  ե. ճիշտ է ներկայացնում լեզվաբանության բաժիններն ու ենթաբաժինները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Իմանալ «լեզվի հնչութային մակարդակ» և «հնչյունաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում հնչութային մակարդակի միավորների ինտեգրալ հատկանիշները, միավորների բնութագրերը,  բ. ճիշտ է ներկայացնում հնչույթ-հնչյուն տարբերակումը, հնչույթի սահմանումները, տարբերակիչ հատկանիշն իբրև լեզվի արտահայտության պլանի նվազագույն միավոր և հնչութային համակարգերի առանձնահատկությունները,  գ. ճիշտ է ներկայացնում հնչյունների ֆիզիկական և ֆիզիոլոգիական հատկանիշներն ու դրանց բնութագրերը,  դ. ճիշտ է դասակարգում բառերի հնչյունային շղթայում կատարվող պատմական փոփոխությունները,  ե. ճիշտ է ներկայացնում հնչյունաբանության ենթաբաժինները և դրանց ուսումնասիրության առարկան,  զ. ճիշտ է ներկայացնում գրի ծագման, զարգացման և տեսակների առանձնահատկությունները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	<p>Իմանալ «լեզվի ձևային մակարդակ» և «ձևաբանություն» հասկացությունների հարաբերակցությունը և քերականական կարգի կառուցվածքը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում լեզվի ձևային սահմանումը, տեսակների սահմանազատումը՝ ըստ արտահայտած իմաստի տիպերի և ըստ բառի կազմում գրաված դիրքի,  բ. ճիշտ է ներկայացնում օբյեկտիվ իրականության լեզվական արտացոլման իմաստաբանական մակարդակները՝ ըստ փաստերի ընդհանրացման ու վերացարկման աստիճանների,  գ. ճիշտ է ներկայացնում արմատական ձևային ձևաիմաստային և գործառական առանձնահատկությունները,  դ. ճիշտ է ներկայացնում բառակազմական/ածանցական ձևային ձևաիմաստային և գործառական առանձնահատկությունները,  ե. ճիշտ է ներկայացնում վերաբերական ձևային ձևաիմաստային և գործառական առանձնահատկությունները,  զ. ճիշտ է ներկայացնում «քերականական կարգ», «քերականական իմաստ» և «քերականական արտահայտության միջոցներ» հասկացություններն ու նրանց հետ կապված հասկացական ապարատը,  է. ճիշտ է ներկայացնում քերականական իմաստների արտահայտության քերականական տեխնիկաները:</p>
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	<p>Իմանալ «լեզվի նշանային մակարդակ» և «բառագիտություն (նշանագիտություն)» հասկացությունների հարաբերակցությունը</p>
<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է տալիս բառույթի սահմանումն իբրև լեզվական նշան, դրա հետ կապված սուբյեկտիվ և օբյեկտիվ դժվարությունները,  բ. ճիշտ է ներկայացնում բառի ստուգաբանական և ըստ ներքին ձևի վերլուծության օրինաչափությունները,  գ. ճիշտ է ներկայացնում բառիմաստի բաղադրիչները, բառույթի բառակազմական և իմաստակազմական կաղապարները, սուբյեկտիվ և օբյեկտիվ, ուղիղ և փոխաբերական իմաստները բառույթում, սեմա, սեմեմա, սեմանտեմա հասկացությունները,  դ. ճիշտ է ներկայացնում լեզվի կայուն բառակապակցությունների/դարձվածքների տեսակները, իմաստային դաշտերը, թարգմանական համարժեքների ստացման ուղիները,  ե. ճիշտ է ներկայացնում բառապաշարի տարբեր դասակարգումները, բառարաններում գրառման տեխնոլոգիան, բառարանների տեսակները,  զ. ճիշտ է ներկայացնում բառույթի ուսումնասիրությամբ զբաղվող բաժինները:</p>

<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Իմանալ «լեզվի ստորոգական մակարդակ» և «շարահյուսություն» հասկացությունների հարաբերակցությունը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում ստորոգական մակարդակի միավորների ընդհանուր բնութագիրը, բ. ճիշտ է ներկայացնում շարույթը իբրև ստորոգական մակարդակի նվազագույն միավոր, շարույթի տեսակները լեզուներում, միահիմքությունը և բազմահիմքությունը, գ. ճիշտ է ներկայացնում բառակապակցությունն ու դերբայական դարձվածն իբրև ստորոգական մակարդակի միավորներ, դ. ճիշտ է ներկայացնում նախադասությունն իբրև ստորոգական մակարդակի և լեզվի գերագույն միավոր, նախադասության հիմնական հատկանիշները, ե. ճիշտ է ներկայացնում խոսողի վերաբերմունքի դրսևորման լեզվական ձևերը, զ. ճիշտ է ներկայացնում շարահյուսական արտահայտության միջոցները:
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-015
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ արտադասարանային և արտադպրոցական աշխատանքների խնդիրների, սկզբունքների, կազմակերպման հիմնական ձևերի մասին և ձևավորել արտադասարանային և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման ու իրականացման կարողություններ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001 «ՅՈՒՐԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ արտադասարանային աշխատանքի ոլորտը
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում արտադասարանային աշխատանքի նպատակը, սկզբունքներն ու ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում արտադասարանային աշխատանքի պլանավորումը՝ հաշվի առնելով աշակերտների տարիքը և հետաքրքրությունները, գ. ճիշտ է ներկայացնում դասարանային և արտադասարանային աշխատանքների փոխկապակցումը, զ. ճիշտ է ներկայացնում դաստիարակության սկզբունքների և մեթոդների կիրառումը դասի ընթացքում և արտադասարանային աշխատանքի ժամանակ:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ արտադասարանային աշխատանքի կազմակերպման և արտադպրոցական աշխատանքի համակարգման եղանակները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում արտադպրոցական աշխատանքի խնդիրները, սկզբունքները և կազմակերպման հիմնական ձևերը, բ. ճիշտ է համակարգում դպրոցական և արտադպրոցական աշխատանքները՝ ըստ աշակերտների հետաքրքրությունների, գ. ճիշտ է ներկայացնում դպրոցական և արտադպրոցական օլիմպիադաները, մրցույթները, ստուգատեսները:
<b>ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-016
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ կրթության ոլորտի ՀՀ հիմնական օրենքների հիմնադրույթների, հանրակրթության իրականացումը կարգավորող հիմնական իրավական ակտերի, ինչպես նաև ուսումնական գործընթացում դրանց նշանակության մասին:
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ

<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ ՀՀ կրթության ոլորտը կարգավորվող ՀՀ հիմնական օրենքների հիմնադրույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում «Կրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները, բ. ճիշտ է ներկայացնում «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները, գ. ճիշտ է ներկայացնում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները, դ. ճիշտ է ներկայացնում «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները և դրա կիրառումը դպրոցում, ե. ճիշտ է ներկայացնում «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները, զ. ճիշտ է ներկայացնում «Երեխաների իրավունքների մասին» ՀՀ օրենքի հիմնադրույթները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ միջնակարգ դպրոցի պետական չափորոշիչի կառուցվածքը և գործառույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում միջնակարգ դպրոցի պետական չափորոշիչի կառուցվածքը, բ. ճիշտ է ներկայացնում միջնակարգ դպրոցի պետական չափորոշիչի գործառույթները:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իմանալ միջնակարգ դպրոցի գործունեությունը կարգավորող հիմնական նորմատիվային իրավական ակտերի և այլ փաստաթղթերի հիմնական դրույթները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի հենքային ուսումնական պլանի հիմնադրույթները, բ. ճիշտ է ներկայացնում քննությունների կազմակերպման, աշակերտների փոխադրման, ավարտման կարգի հիմնադրույթները, գ. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի կանոնադրության հիմնադրույթները, դ. ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդմիավորման կանոնադրությունների հիմնադրույթները:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈւԼԴ 4-09-017
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիք լեզվի երկու գոյածների՝ իբրև համակարգ և կառուցվածք, նրանց փոխակերպումների, միավորների և նրանց միջև գործող հարաբերությունների մասին, որոնց գործարկումով հնարավոր է դառնում իրագործել հասարակության համար լեզվի կարևորագույն՝ հաղորդակցական դերը:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի բոլոր ուսուցանվող մոդուլները:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Իմանալ ինքնագնահատման մեթոդները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ընտրում ինքնագնահատման մեթոդները, բ. համարժեք է գնահատում իր կարողունակությունները, գ. համարժեք է գնահատում իր առանցքային հմտությունները:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Վերհանել իր մասնագիտական զարգացման կարիքները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում անհրաժեշտ մասնագիտական կարողությունները, բ. ճիշտ է որոշում իր կարիքները մասնագիտական զարգացման տեսանկյունից,

	գ. ցուցադրում է իր մասնագիտական կարիքները բավարարելու համար տեղեկատվության, ուսումնառության աղբյուրներ կողմնորոշվելու, հայթայթելու և դրանցից օգտվելու օրինակներ:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Իմանալ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության առանձնահատկությունները
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում կրթության և ուսումնառության ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ձևերը, բ. ճիշտ է ներկայացնում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունից ֆորմալ կրթության անցնելու ճանապարհները:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄԱՏԵՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-018
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Մոդուլի նպատակն է՝ սովորողին տալ գիտելիքներ դպրոցում մատենավարության, ուսումնական և վերլուծական փաստաթղթերի ստեղծման մասին
<b>Մոդուլի տևողությունը</b>	18 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Չկան
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կատարել գրանցում դասամատյանում՝ ըստ թեմատիկ պլանի և դասամատյանի վարման կանոնների
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. դասամատյանում գրանցումները կատարում է ըստ թեմատիկ պլանի, բ. գրանցումները դասամատյանում կատարում է ըստ դասամատյանի վարման կանոնների:
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կազմել ամփոփաթեթ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում ամփոփաթեթերի կառուցվածքները, բ. ճիշտ է կազմում ամփոփաթեթ՝ ըստ սահմանված նմուշի, գ. ամփոփաթեթի հիման վրա ճիշտ է կատարում վերլուծություններ:
<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կազմել անձնական գործեր [դասղեկ]
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում անձնական գործերի տիպերը, բ. ճիշտ է կազմում անձնական գործ, գ. կարողանում է վարել անձնական գործեր:
<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Կազմել աշակերտի բնութագիր
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում աշակերտի բնութագրի տիպերը, բ. ճիշտ է կազմում աշակերտի բնութագիր, գ. ներկայացված բնութագրերից ճիշտ հետևություններ է անում:
<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կազմել քննական արձանագրություն, գեկուցագիր
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում քննական արձանագրությունների տիպերը, բ. ճիշտ է կազմում քննական արձանագրություն, գ. ճիշտ է կազմում գեկուցագիր՝ ըստ առաջադրված խնդրի:
<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Կազմել և վարել աշակերտների անհատական թղթապանակ
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում անհատական թղթապանակների տիպերը, բ. ճիշտ է կազմում անհատական թղթապանակ, գ. կարողանում է վարել անձնական թղթապանակներ:

<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱՎԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-019
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է մասնագետի պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է էկոլոգիական գիտելիքների ուսուցման միջոցով ուսանողին օժտել ընդհանուր էկոլոգիական գրագիտությամբ, դրա հիման վրա ձևավորել էկոլոգիական վարքագիծ, ինչը ուսանողը կօգտագործի իր հետագա մասնագիտական գործունեության մեջ:
<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է ուսումնասիրած լինի ՈԼԴ 4-09-001 «Հոգեբանություն» մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ռեսուլտատային արդյունք 1</b>	<b>Իմանալ էկոլոգիական հիմնական հասկացությունները</b>
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիան՝ որպես բնագիտական, սոցիալական գիտություն, և նրա կապը այլ գիտությունների հետ, բ. ճիշտ է բացատրում անկենդան, կենդան և մարդածին գործոնների ազդեցությունը օրգանիզմի վրա, գ. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական համակարգերը և նրանց բաղադրիչները:
<b>Ռեսուլտատային արդյունք 2</b>	<b>Իմանալ էկոլոգիական հիմնախնդիրների բովանդակությունը և դրանց լուծմանն ուղղված միջոցառումները</b>
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է թվարկում հիմնական էկոլոգիական հիմնախնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում յուրաքանչյուր էկոլոգիական հիմնախնդրի էությունը, գ. ճիշտ է թվարկում ՀՀ կողմից վավերացված էկոլոգիական հռչակագրերը, ճիշտ է ներկայացնում ՀՀ «Կարմիր գիրքը» և նրանց ընդհանուր բովանդակությունը, դ. ճիշտ է ներկայացնում անձի էկոլոգիական իրավունքներն ու պարտականությունները:
<b>Ռեսուլտատային արդյունք 3</b>	<b>Իմանալ էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը</b>
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության նպատակն ու բովանդակությունը, բ. ճիշտ է ներկայացնում էկոլոգիական դաստիարակության կապը մարդկային գործունեության բոլոր ոլորտների հետ, գ. ճիշտ է բացատրում էկոլոգիական դաստիարակության դերը մարդու առօրյա գործունեության մեջ:
<b>Ռեսուլտատային արդյունք 4</b>	<b>Դրսևորել էկոլոգիական վարքագիծ իր ամենօրյա գործունեության մեջ</b>
<b>Կատարման չափանիշներ</b>	ա. կողմնորոշվում է և ճիշտ լուծումներ է տալիս էկոլոգիական իրավիճակային խնդիրներին:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆԱՏՈՄԻԱ, ՖԻԶԻՈԼՈԳԻԱ, ՀԻԳԻԵՆԱ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»</b>	
<b>Մոդուլի դասիչը</b>	ՈԼԴ 4-09-020
<b>Մոդուլի նպատակը</b>	Այս մոդուլը նախատեսված է «Ռուսաց լեզվի ուսուցիչ» որակավորմամբ մասնագետների պատրաստման համար: Այս մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ երեխաների օրգանիզմի աճի և զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին՝ երեխաների առողջության պահպանման, հնարավոր հիվանդությունները և առողջության խանգարումները ժամանակին նկատելու և համապատասխան գործողություններ իրականացնելու համար:
<b>Մոդուլի տևողությունը</b>	108 ժամ
<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլի յուրացման համար ուսանողը նախապես պետք է ուսումնասիրած լինի «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>Ռեսուլտատային արդյունք 1</b>	<b>Իմանալ դպրոցականի օրգանիզմի աճի և զարգացման հիմնական օրինաչափությունները և նրանց վրա ազդող գործոնները</b>

<b>Կատարման չափանիշներ</b>	<p>ա. ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի աճի առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները:</p> <p>բ. ճիշտ է ներկայացնում դպրոցականի օրգանիզմի զարգացման առանձնահատկությունները և նրա վրա ազդող գործոնները:</p> <p>գ. օգտվում է դպրոցականների ֆիզիկական զարգացման ցուցանիշների տեղեկատվական տիպօրինակներից և դրա հիման վրա ճիշտ հետևություններ է կատարում երեխաների օրգանիզմի աճի և զարգացման մասին:</p>
<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Իմանալ դպրոցականի օրգան-համակարգերի անատոմիական կառուցվածքային առանձնահատկությունները
